ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2017 թվականի N 1556 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՆԵՐԴՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման ճանապարհային քարտեզը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 29
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի 2017 թ.
դեկտեմբերի 29-ի N 1556-Ա
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

NN ը/կ	Իրավական հատվածը	Վերջնաժամկետը	Պատասխանատու կատարողը	Համակատարողը
1	2	3	4	5
1.	Էլեկտրոնային առողջապահական համակարգի ինտեգրման հնարավորության ուսումնասիրություն ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծրագրային համակարգի հետ և կատարման ժամկետի սահմանում	2018 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ արդարադատության նախարարություն «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերություն (համաձայնությամբ)
2.	Բժշկական օգնություն և սպասարկում իրակա-նացնողների ցանկի (այդ թվում՝ վավերա-պայմանների) ստացում և բիզնես ռեգիստրի ներմուծում էլեկտրոնային առողջապահական համակարգ	2018 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	ՀՀ առողջապահության նախարարություն	էլեկտրոնային առողջապահության համակարգի կառավարման միասնական օպերատոր (համաձայնությամբ) Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներ
3.	Բժշկական միջազգային ստանդարտների ներդրում	2018 թ. մարտի 1-ին տասնօրյակ	ՀՀ առողջապահության նախարարություն	էլեկտրոնային առողջապահության համակարգի կառավարման միասնական օպերատոր (համաձայնությամբ)
4.	Էլեկտրոնային առողջապահական համակարգի ինտեգրում շտապօգնության կենտրոնական դիսպետչերական ղեկավարման ծրագրային համակարգի հետ	2018 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ առողջապահության նախարարություն	էլեկտրոնային առողջապահության համակարգի կառավարման միասնական օպերատոր (համաձայնությամբ)
5.	Մարզային շտապօգնության կենտրոնական դիսպետչերական ղեկավարման ծրագրային համակարգի ինտեգրում էլեկտրոնային առողջապահական համակարգին	2018 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ առողջապահության նախարարություն	էլեկտրոնային առողջապահության համակարգի կառավարման միասնական օպերատոր (համաձայնությամբ)
6.	Պետական բժշկական կազմակերպությունների միջև ներքին ցանցի նախագծում և ստեղծում	2018 թ. ապրիլի 3-րդ	ՀՀ առողջապահության նախարարություն	

1	2	3	4	5
		տասնօրյակ		
7.	էլեկտրոնային առողջապահական համակարգի ինտեգրում ՀՀ ապահովագրական ընկերություններին	2018 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	էլեկտրոնային առողջապահության համակարգի կառավարման միասնական օպերատոր (համաձայնությամբ)	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)
8.	ՀՀ առողջապահության առկա ծրագրային այլ համակարգերի, շտեմարանների գույքագրում	2018 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ առողջապահության նախարարություն	
9.	էլեկտրոնային առողջապահական համակարգի ներդրում ՀՀ-ում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատություններում	2018 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ առողջապահության նախարարություն	
10.	Պետական բժշկական կազմակերպությունների տեխնիկական հագեցվածության գնահատում, ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության բժշկական կազմակերպությունների ենթակառուցվածքի նախագծում	2018 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ առողջապահության նախարարություն	
11.	Անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերման ֆինանսավորման հաստատում և գնումների կազմակերպում	2018 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ առողջապահության նախարարություն	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ